

## ԱՐԵՎԵԼԱՅԱՅՆ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՅԱՏՈՒԹՅԱՍՄԱՐ

### ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Արշակ Չոպանյանի գրական-քննադատական ժառանգությունը հսկայական նյութ է տալիս ուսումնասիրողին: Սկզբից և երկու և երրորդ մշակույթային արժեքների գնահատումը, վիդապահության ամենաբարձր արժեքների գնահատումը, վիճակագրությունը և աշխատություններում ինչպես ժամանակակից, այնպես էլ անցյալի հայ մշակույթի գործիչները միշտ էլ արժանացել են հավասար ուշադրության՝ անկախ այն բանից, թե որ հատվածում են ապրել ու ստեղծագործել, լեզուն արևելահայերենն է եղել, թե արևմտահայերենը:

Ընդհանրապես, պետք է նկատել, որ XIX դարի վերջին քառորդում հայության երկու հատվածների մշակույթների մերձեցման, իրար հետ մտավոր սերտ հարաբերություններ հաստատելու ձգտումը վաղուց արդեն դարձել էր կենսական անհրաժեշտություն թե՝ արևմտահայերի և թե՝ արևելահայերի համար: Բանն այն է, որ աշխարհագրական և քաղաքական բաժանվածությունը որոշ անջրապետ էր առաջացրել ազգի երկու հատվածների մտավոր կացութածերի միջև՝ առաջ թերելով ինչ-որ հոգեբանական խորթություն: «Արևելահայերը 50–60-ական թվականներին արդեն վերցրել են ընդհանուր-ազգային գաղափարաբանական առաջնորդությունը, և եթե այս իրողությունը արտահայտություն էր տալիս որոշ մեծապետական հովերի, ապա աննկատելի չեր նաև այն փաստը, որ հոգեբանական ենթակայության հանգամանքը իր հերթին արևմտահայ մտավորականության որոշ շրջանների զգացմունքները գումավորում էր տեղայնամտական նախանձախնդրությամբ: Նման երևույթները, սակայն, պատմության էնակիրիկ դրսևնորումներ էին, որոնք հենց էնակիրիկ լինելով, պետք է տեղի տային ազգի հոգենոր ընդհանրության փիլիսոփայական ծննարտության առաջ»<sup>1</sup>, գրում է Ս. Սարինյանը:

Եվ իրոք, սկսած 1870-ական թվականների կեսերից՝ «Մշակ» թերթի նախաձեռնությամբ սերտ, կանոնավոր փոխարարերություններ սկզբնավորվեցին հայության երկու հատվածների միջև, որոնք էլ ավելի ընդլայնվեցին և ամրացան Պոլսի «Արևելի» հրատարակմանը: Իսկ մինչ այդ, ինչպես նկատում է Ա. Արփիհայրյանը, «Թուրքիո հայերը շատ քիչ բան կ'իմանային Ռուսիո հայոց կյանքեն»<sup>2</sup>:

Հոգեբանական մերձեցումը կամուրջներ է ստեղծում երկու հատվածների միջև նաև գրական կյանքի փոխադարձ լուսաբանությամբ (Ս. Սարի-

<sup>1</sup> Ս. Սարինյան, Սերունդներ և ավանդներ, Եր., 1984, էջ 63:

<sup>2</sup> Ա. Արփիհայրյան, Երկեր, Եր., 1987, էջ 493:

նյան): «Մշակի», «Արձագանքի», «Նոր դարի» էջերում, օրինակ, տպագրվում և արժեսորվում են Յ. Պարոնյանի, Ա. Արփիարյանի, Տ. Կամսարականի, Շերենցի, Պ. Դուրյանի, Ս. Պեշիկթաշյանի, Ղ. Ալիշանի և այլ գրողների ստեղծագործությունները, գնահատվում են արևմտահայ գրականության բնորոշ երևույթները:

Երկու հատվածների մշակութային կապերի սերտացման հարցը արևմտահայ իրականության մեջ մի առանձնահատուկ կրքուսությամբ է առաջադրվում 1880-ականների ռեալիստները և հատկապես նրանց առաջնորդի՝ Ա. Արփիարյանի կողմից: Արփիարյանը ամենայն լրջությամբ էր ըմբռնում ու մեկնաբանում խնդրի անհրաժեշտությունը: Կարևորելով արևմտահայ և արևելահայ գրողների ու գրական գործընթացների միջև կապն ամրապնդելու հարցը՝ նա վերջինիս մեջ դնում էր ավելի խոր ու լայն բովանդակություն, քան սուկ ազգային գրականության միասնականության գաղափարն էր: Դարցն ուներ նաև քաղաքական, մասնավորապես՝ ազգապահպաննան և ազատագրական խնդիրների լուծման ներքին միտվածություն: «Խնդրի ըննության պատճական հայեցակետի հիմքով,- գրում է Լ. Մուրադյանը,- քննադատը, զուգադրելով երկու հատվածների զարգացման յուրահատկությունները, ազգային ընդհանրության ըմբռնան պահանջը դիտում էր առաջնային»<sup>3</sup>:

Դայ ժողովրդի հոգևոր մշակույթի միասնականության խնդիրը վերաճում էր ազգի համախմբման մի ավելի ընդհանուր սկզբունքի: Ահա խորապես ըմբռնելով պատմական պահի այդ յուրահատկությունը՝ Արփիարյանը երկու գրականությունների միասնականությանը տալիս էր համազգային մեծ նշանակություն: Նա ամենօրյա աշխատանքով զգտում էր արագացնել այդ միավորման ընթացքը և բոլոր միջոցներով պայքարում էր դրան խանգարող երևույթների դեմ:

Ընդհանրապես շատ մեծ է Ա. Արփիարյանի դերը արևմտահայությանը արևելահայ նոր գրականության լավագույն արժեքների հետ ծանոթացնելու գործում: «Սասիսում», այնուհետև «Դայրենիքում» նա քննական հոդվածներով, նաև առանձին ստեղծագործությունների տպագրմանը արևմտահայ շրջաններին պարբերաբար ծանոթացնում էր արևելահայ գրականության նորույթներին: Չնայած բազմաթիվ խոչընդոտներին՝ «Արևելքում» տպագրում է Շաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» և «Խամսայի մելիքությունները»<sup>4</sup>: Արևմտահայ հասարակությունը առաջին անգամ Արփիարյանի նախաձեռնությամբ է ծանոթանում Խ. Աբովյանին ու Պ. Պողոսյանին, Լեռյին ու Վիթ. Փափազյանին, Գ. Արծրունուն ու Գ. Սունդուկյանին և շատ ուրիշների: Հետագայում նկատելիորեն ընդլայնվում են արևմտահայ քննադատության հետաքրքրությունները արևելահայ գրականության հանդեպ: Դրվագներ են տպագրվում Միք. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ալ. Շիրվանզադեի, Յ. Զովհաննիսյանի և այլ գրողների նաև ընդարձակ խոսք է բացվում Լեռյի ստեղծագործության վերաբերյալ, իրատարակվում են Գանառ-Քաթիպայի անտիպ բանաստեղծությունները: Այդ տեսակետից հատկապես արգասավոր են դաշնում «Արևելք», «Երկրագունդ»

<sup>3</sup> Լ. Մուրադյան, Ա. Արփիարյան. Կյանքը և ստեղծագործությունը, Եր., 1991, էջ 131-132:

<sup>4</sup> Տես նույն տեղը, էջ 80:

պարբերականները և մանավանդ «Մասիս» հանդեսը, որոնք, լուս ընծայելով արևելահայ դասականների երկերը, շատ հաճախ դրանք ուղեկցում են ներկայացվող գրողի կյանքն ու ստեղծագործությունը բնութագրող համառոտ ակնարկներով:

Շարունակելով ստեղծված ավանդույթը՝ Ա. Չոպանյանը առավել ծավալում, զարգացնում և ընդլայնում է այդ գործը: «Կարելի է ասել,- գրում է Ր. Թամրազյանը,- որ խառնվածքի և ոճի տարբերություններով հանդերձ՝ նա էլ Արփիարյանի պես արևմտահայ նորագույն գրականության եռանդում վերտողներից էր, գաղափարական-գեղագիտական լիցքեր էր տաիս նորագույն հեղինակներին, մյուս կողմից՝ կազմակերպում նաև հայության երկու հատվածների գրականության առնչությունները»<sup>5</sup>:

Հայության երկու հատվածների մշակութային մերձեցման հարցը Չոպանյանի կողմից առանձնահատուկ շեշտով է դրվում հատկապես անահիտյան շրջանում, երբ ինքն էլ՝ հանդեսի խմբագիրը, պարբերաբար անդրադառնում է արևելահայ մամուլի գրական քաղաքականությանը, գրականության վերջին նորություններին և իր քննադատության ոլորտ է առնում արևմտահայ և արևելահայ գրականության բնորոշ երևույթները: «Ինքն իսկ լինելով իր հանդեսի գլխավոր քննադատը՝ Չոպանյանը հեռվից ու լայն տեսանկյունով էր դիտում ընթացիկ գրականության համապատկերը,- գրում է Լ. Մնացականյանը:- Նրա համոզմամբ, պատմական պահը ուղղակի հարկադրում էր, որպեսզի քաղաքական միասնությունից զրկված հայ ժողովուրդը աշխարհին ներկայանա հոգևոր կյանքի միասնությամբ, որ ամենից առաջ պիտի իրագործվեր գեղարվեստական գրականության մեջ»<sup>6</sup>:

Նշանակալից է հատկապես 1899 թ. «Անահիտում» տպագրված «Ուուսահայեր ու թքահայեր» խորագրով հոդվածը: Դա ըստ Էռլեյան պատասխան էր «Մուրճի» խմբագրի առարկություններին, որոնք վերաբերում էին ամսագրի 10-ամյակին նվիրված մի հոդվածում<sup>7</sup> արևելահայ գրականության մասին Չոպանյանի արտահայտած տեսակետներին: Բուն բանավեճի քննությունը մեր նպատակներից դուրս է<sup>8</sup>: Հոդվածը մեզ հետաքրքրում է այնքանով, որքանով հեղինակը, առաջնորդվելով կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքներով, բացատրում և մեկնաբանում է հայ նոր գրականության արևելահայ ու արևմտահայ ճյուղերի առանձնահատկություններն ու տարբերությունները:

Զուգարդելով երկու հատվածների գրականությունը՝ Չոպանյանը, ելելով ազգային գիտակցության միասնության գաղափարից, առաջադրում է երկու հատվածների հոգևոր մերձեցման անհրաժեշտությունը՝ որպես ազգային գրականության զարգացման կարևոր նախադրյալ: «Ինձի համար,- գրում է քննադատը,- Ուուսահայ եւ Տաճկահայ՝ միեւնոյն ցեղն են իր

<sup>5</sup> Ր. Թամրազյան, Յայ քննադատություն, Գիրք Գ, Եր., 1992, էջ 648:

<sup>6</sup> Լ. Մնացականյան, Քսաներորդ դարասկզբի արևմտահայ գրական քննադատությունը, Եր., 1990, էջ 246:

<sup>7</sup> Տե՛ս Ա. Չոպաննեան, «Մուրճը» եւ ուուսահայ արդի գրականութիւնը, «Անահիտ», Փարիզ, 1899, № 5-6:

<sup>8</sup> Այդ մասին տե՛ս Լ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 247-250, Ր. Թամրազյան, նշվ. աշխ., էջ 654-655:

միեւնոյն հիմնական յատկանիշներովը, որ իր երկու հատուածներուն մէջ կ'այլազանուի այն նասնաւոր գոյնովը զոր տեղական միջավայրը, տիրող քաղաքակրթութիւնը կուտան անոր: Քննադատութեան գործը պէտք է ըլլայ ամէն կողմնակալ նկատումէ բարձրանալով՝ ուսումնասիրել այդ արտաքին տարբերութիւնները, բաղդատել զանոնք ու եզրակացութիւններ համել, – աշխատութիւն մը որուն խղճանիտ կատարումովը հայ ցեղը, իր ամբողջութեամբը, պիտի կարենայ օգտուիլ»<sup>9</sup>:

Այնուհետև գրականագետն անդրադառնում է երկու հատվածների տարբերություններին, պարզաբանում դրանց պատճառները՝ վերջիններս ուղղակիորեն բացատրելով երկու հատվածների քաղաքական, աշխարհագրական, պետական, ընդհանուր կրթական մակարդակների տարբերություններով: Արևելահայերի ազգային գոյությունն ու քաղաքական կացությունը ուսուական տիրապետությունից հետո, ինչպես նշում է գրականագետը, որոշակիորեն կայուն էր ու ապահովված, որը և ուղենչեց նրա հասարակական, մտավոր ու նյութական զարգացման բնականոն ընթացքը: Մշակույթը սերտորեն կապված էր բնօրրանի հետ, և արդեմ՝ սկսած Արովյանից, գրականությունը նախընտրել էր ժողովրդական, ազգային ուղղությունը, և ինչպես նկատում է քննադադար, «դանդաղ բայց տրամաբանական ընթացքով մը՝ դէք ի բարձրագոյն արուեստ մը, դէք ի համանարդկային ու գիտուն գրականութիւն մը կը դիմէ»<sup>10</sup>: Ինչ վերաբերում էր արևմտահայ իրականությանը, ապա այստեղ գոյության անհաստատ կացությունը, «թուրք մթնոլորտին» ամենէն սանձարձակ կամայականութեան» ծանր պայմանները, կրոնական պառակտումները լուրջ ճեղքեր էին առաջ բերել ազգային հոգեբանության մեջ՝ նրա ամբողջությունը տրոհելով օտարման ու տարընթացության հիվանդագին դրսկորումներով: Մտավոր-գրական կյանքը ապաստանել էր բնաշխարհից հեռու, օտար քաղաքներում, և որովհետև ազգային գրականությունն աներևակայելի էր առանց ժողովրդական կյանքի հետ անմիջական շփման և ուսումնասիրության, ուստի և գեղարվեստական նտածողությունն տուրք էր տվել եվրոպական ճաշակի նմանակությանը, թեև, ինչպես նկատում է Չոպանյանը, արևմտահայոց մէջ ևս աստիճանաբար ծնունդ էր առնում «ազգային գոյնով սնուած գրականութիւնը»:

Անփոփելով իր դիտողությունները արևելահայ և արևմտահայ հոգևոր մշակույթի եական տարբերությունների վերաբերյալ՝ գրականագետը դրանք ընդհանրացնում է հետևյալ երեք կետերի մէջ. «ա. Ռուսահայերը աւելի «ընկերական զգացում», աւելի «հայաքական զարգացում» ունին, Տաճկահայերը աւելի «անծնական ինքնատպութիւն», աւելի «անհատականութիւն». բ. Ռուսահայոց մէջ տիրական ձգտումը «օգտապաշտութիւնն» է, Տաճկահայոց մէջ «գեղեցկագիտական զգացումը». գ. Ռուսահայերը աւելի «ազգային գոյն» ունին, աւելի «հայ ու արեւելցի» են, Տաճկահայերը աւելի «արեւմտական» են, աւելի «միջազգայնութեան մօտեցած»»<sup>11</sup>:

Որ այս բնութագրումների մէջ վիճելի կետեր կան, անառարկելի է: Այդ իրողությունը նկատում է նաև Եղ. Զրբաշյանը: «Այս բնութագրումների

<sup>9</sup> Ա. Չոպանեան, Ռուսահայեր ու թրքահայեր, «Անակիտ», 1899, Փարիզ, № 11, էջ 318:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 324:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 318:

շատ կողմեր, իհարկե, կարելի է վիճարկել,- գրում է նա:- Բայց պետք է նկատի ունենալ, որ նշված տարբերությունները, Չոպանյանի կարծիքով, բացարձակ չեն, այլ ցույց են տալիս միայն էականը, գերակշռողը, որ գոյացել է «տեղական միջավայրի և տիրող քաղաքակրթության» ազդեցության տակ: Այդ հատկանիշները նաև անշարժ, հավերժական մի բան չեն, այլ գտնվում են զարգացման ու փոխազդեցության մեջ և «ներքնապես կրնան միության վերածվիլ»<sup>12</sup>:

Հատկանշական է, որ Չոպանյանը արդեն նկատում է այդ միության երկողմանի զգտման բույրը, նույնիսկ բերում է օրինակներ: «Խորիմեան, ու մանաւանդ Սրուանձտեանց ու Տեվկանց, Վանէն, հայ հողէ բուսած էցեր արտադրած են: Տեվկանցի Շահէնը Թթրահայոց Վէրը Դայաստանին է... Դրանդ Պոլիս չարչարուող «պանդուխտ» ներուն մարտիրոսութիւնը պատմեց «հայ» էցերու մէջ. Թլկատինցին գաւառական կեանքի պատկերներ գծեց հզօր, համեղ ու քնարերգական սրամտութեամբ մը»<sup>13</sup>: Իսկ արևելահայ գրականության ընթացքի մեջ միաժամանակ սկսվել էր կազմավորվել գրական մի նոր սերունդ՝ գեղասեր և ավելի լայնածաշակ, նկատում է գրականագետը:

Առաջադրելով ազգի երկու հատվածների մշակութային կապերի զարգացման խնդիրը, դնելով գրական կյանքի փոխադարձ լուսաբանության պահանջը՝ Չոպանյանը ինքն էլ երևույթի կենսական անհրաժեշտության խոր գիտակցումով էր մոտենում հարցին<sup>14</sup>: Դայ նոր գրականությունը ժողովրդի մեջ տարածելը, արևելահայ և արևմտահայ հատվածների մշակույթը փոխադարձաբար իրար ծանոթացնելը, մանավանդ արևելահայ գրականության խոշոր դեմքերին արևմտահայության մեջ հանրաճանաչ դարձնելը գրականագետի համար ունեին գրիծնական նշանակություն և, ինչպես արդեն նկատեցինք, նրա մշտական գործունեության ամենակարևոր բաժիններից էր: «Անահիտի» էցերուն նա պարբերաբար երկեր է տպագրում արևելահայ գրականությունից, մեկը մյուսի հետևից հրապարակ է հանում ուսումնասիրություններ Աբովյանի<sup>15</sup>, Պռոշյանի, Ռաֆֆու, Սունդուկյանի, Շիրվանզադեի, Յ. Շովիաննիսյանի և այլ գրողների մասին, ինչպես նաև տպագրում է քննադատական ակնարկներ, որոնք ուրվագծում էին արևելահայ գրականության զարգացման գլխավոր ուղղությունները, ներկայացնում գրական շարժման համապատկերը: Այդպես Չոպանյանը նկատելիորեն աշխուժացնում է արևմտահայ հասարակության և հատկապես գրական քննադատության հետաքրքրությունները արևելահայ գրա-

<sup>12</sup> Եղ. Զրբաշյան, Գեղագիտություն և գրականություն, Եր., 1983, էջ 336–337:

<sup>13</sup> Ա. Չոպանեան, Ոլոսահայեր ու թրքահայեր, «Անահիտ», էջ 325:

<sup>14</sup> Այս հարցերը գրականագետի կողմից հետևողական արտահայտություն են ստացել նաև 1910 թ. տպագրված «Գերագոյն ուժը» Վերնագրով հոդվածում: Այս հանգանաքը կրկին համոզում է, որ Չոպանյանի համար արևելահայ և արևմտահայ մշակույթների մեջեցման, փոխարացման խնդիրը արտահայտում էր մի ամբողջ գրական աշխարհայցք, որ տարիների ընթացքում ոչ միայն չի փոխվում, այլև գնալով ավելի է խորանում ու հարստանում (տես Ա. Չոպանեան, Գերագոյն ուժը, «Անահիտ», Փարիզ, 1910, № 11–12, էջ 247–248):

<sup>15</sup> Ա. Չոպանյանի՝ Խ. Աբովյանին ու նրա գրական ժառանգությանը տված գնահատականներին մենք անդրադարձել ենք առանձին (տես Վ. Ավագյան, Աբովյանը անցյալի և պատմական հեռանկարի ուղիներում, «Նոր-Դար», Եր., 2003, № 2, էջ 44–48):

կանության հանդեպ և, վերջապես, հոգեբանական մերձեցման կամուրջներ ստեղծում երկու հատվածների մշակութային կյանքում:

Եվ եթե անգամ այդ գրախոսություններից, նաև հոդվածներից շատերը հեռու են տվյալ հեղինակի ստեղծագործության վերաբերյալ գրականագիտական-գեղագիտական հանրագումար լինելուց և ոչ էլ առաջին կամ ելակետային խոսքն են այս կամ այն գրողի կամ գործի վերաբերյալ, հաճախ էլ զուրկ են տեսական բանաձևումներից կամ ինաստասիրական բարդ դատողություններից, այնուհանդերձ դրանք ուշագրավ են նրանով, որ իրենց արտաքուստ անպաճույժ տեսքի տակ անպայմանորեն ուրվագծում են Չոպանյանի քննադատական խառնվածքի, գեղագիտական նախասիրությունների առանձին կողմեր, և դրանք մոռացության մատնելը կլիներ շատ անարդարացի:

Առաջիններից մեկը, որին արևելահայ հեղինակներից անդրադարձավ Ա. Չոպանյանը, Գ. Սունդուկյանն էր: Վերջինիս թատերական գործունեության 50-ամյակի առթիվ գրած հոդվածում Չոպանյանը թեպետ շատ հակիրծ, սակայն հիմնավոր բացահայտում և ընդգծում է գրողի ստեղծագործության ամենաբնորոշ ու էական կողմերը<sup>16</sup>: Յատկանշական է, որ 1912 թ., երբ Չոպանյանը Գ. Սունդուկյանի մահվան առիթով կրկին անդրադարձում է գրողի անձին և նրա արվեստի առանձնահատկություններին, ցավով նկատում է, որ շատերը, մանավանդ արևանտահայերի մեջ, միայն վերջինիս անունը գիտեն: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ գրականագետը մի առանձնահատուկ սրությամբ է դնում գրողի անձին ծանոթացնելու և նրա գործը ճանաչելի դարձնելու խնդիրը: «Սունդուկյանցի գործը պետք է տարածել ժողովրդին բոլոր խավերուն, բոլոր հատվածներուն մեջ»<sup>17</sup>, - գտնում է նա:

Յոդվածն ունի ընդգծված դրական շարադրանք, բնութագրումներում երեմն նկատելի է զգացմունքային կողմը, չկան նույնիսկ աննշան դիտողություններ: Սակայն դա ամենակիս չի նշանակում, թե Չոպանյանը Սունդուկյանի արվեստը արժենորելիս գերագնահատում է այն, մանավանդ որ տված գնահատականները հիմնավորված են, և նրանցից շատերը իրենց հետաքրքրությունը չեն կորցրել նաև այսօր: Պարզապես կարծում ենք՝ հոդվածի ոգին բուն իմաստով ոչ այնքան վերլուծական է, որքան զգացմունքային. չէ՞ որ, ի վերջո, այն գրված է գրողի մահվան կապակցությամբ, ուստի առաջին հերթին պետք է զգացվեր հարգանքը հեղինակի և նրա վաստակի նակատնամբ:

Չոպանյանը Սունդուկյանի տաղանդի ամենաբնորոշ ու գլխավոր հատկանիշը համարում է «դիտողության կարողությունը», նրա՝ «կյանքի սուր ու ճշգրիտ ընթանումին ձիրքը»: Ընդ որում, ինչպես նկատում է հոդվածագիրը, «Ատիկա կարճատեսի մանրախույզ հատվածական դիտողությունը չէր, այլ թափանցող հայացքը, որ նկարագրմերու հիմքը, տիպարներու ներսիդին, կյանքի պատկերներու թաքուն նշանակությունը կմկատն ու կիասկնա» (733):

<sup>16</sup> Տես Ա. Չոպաննեան, Ազգային քողմիկ, «Անակիտ», Փարիզ, 1901, № 4-5, էջ 128:

<sup>17</sup> Ա. Չոպանյան, Երկեր, Եր., 1988, էջ 744: Այսուհետև այս իրատարակությունից կատարած մեջբերումների համապատասխան էջը կնշվի տեքստում փակագծերի մեջ:

Ժամանակային առումով թեև Սունդուկյանը հաճարվում է հայ առաջին «ճշմարտապես իրապաշտ» գրողը, սակայն նրա ստեղծագործությունը դիտվում է որպես հայկական ռեալիզմի բարձրագույն արտահայտություններից մեկը: Գրողի գեղագիտական ըմբռնումների, նրա գրական մեթոդի ձևավորման մեջ կարևոր տեղ վերապահելով ռուս և ֆրանսիացի իրապաշտ վարպետներից կրած ազդեցությանը՝ Չոպանյանը, այնուամենայիվ, Սունդուկյանի ռեալիստական արվեստի բնույթը բացատրում է գլխավորապես նրա «խառնվածքի իսկությանը»: «Եվ այդ ներքին բնածին հակումն է, – գրում է քննադատը, – որ, այնպիսի շրջանի մը, ուր հայոց մեջ ռոմանտիկ ուղղությունը միահեծան կտիրեր և ուր նույնիսկ Եվրոպայի մեջ իրապաշտությունը դեռ նոր սկսած էր կազմվիլ իբր դպրոց և պայքարի մեջ էր ռոմանտիզմին հետ, մղած է Սունդուկյանցը հարիլ այդ նոր դպրոցին և զայն ընդգրկելով իհմնել հայ իրապաշտ քատերական գրականություն մը: Ու աշխարհիս մեջ քիչ գրագետ կա, որ Սունդուկյանցին չափ զուտ, անխառն իրապաշտ եղած ըլլա» (734–735):

Սունդուկյանի ստեղծագործության արժանիքները գնահատելիս Չոպանյանը անում է բազմաթիվ նկատումներ, որոնք բխում են գրողի ռեալիզմի ոգուց և միաժամանակ բացահայտում են նրա գեղարվեստական մտածողության բաղկացուցիչ տարրերը: Այդ դիտարկումները հետաքրքիր են հատկապես այն առումով, որ նրանցում ըստ էության ձևակերպվում են նաև ուսումնասիրողի ըմբռնումները ռեալիզմի մի շարք եական կողմերի վերաբերյալ: Օրինակ, «Ոչ մեկ ավելորդություն կա հոն (Սունդուկյանի գործի մեջ - Վ. Ա.): Այդքան հակիրճ, սեղմ, խիտ հեղինակ քիչ կարելի է գտնել: Տիպարները գծված են մեծ, լայն գծերով: Խոսակցությունները արագ են, կտրուկ, կենդանի, տեսարանները՝ աշխույժ, ամփոփ: Յեղինակը իբր ճշմարիտ արվեստագետ ըմբռնած է, որ կյանքը ճիշտ նկարելու համար, պետք է ոչինչ ավելցնել, բայց և պետք է գիտնալ կրծատել ավելորդ մանրամասնությունները և ցույց տալ միայն էականները» (737):

Չոպանյանի գեղագիտական համակարգը մեկնաբանելու տեսակետից սկզբունքային նշանակություն է ստանում նաև այն անհանդուրժողականությունը, որ գրականագետը հանդես է բերում գեղարվեստական գրականության մեջ բացահայտ միտումնավորության նկատմամբ: Որքան էլ Սունդուկյանը իր արվեստի մեջ բացարձակ իրապաշտ էր, այնուհանդերձ կյանքի նկատմամբ չէր կարող չունենալ իր որոշ հակումները, սկզբունքները, շեշտված նախասիրություններն ու ատելությունները: Ներկայացնելով գրողի անհատականության դրսնորումը իր գործերում պատկերվող իրականության վերաբերմամբ՝ Չոպանյանը ըստ էության բնութագրում է նրա աշխարհայացքը՝ առանց վերջինիս անունը տալու: Սակայն Սունդուկյանի՝ որպես ռեալիստ գեղագետի գրական արժեքը այն է, որ, ինչպես նկատում է քննադատը, նրա հայացքները ստանում են զուտ գեղարվեստական դրսնորում՝ գրողի ստեղծագործությունը զերծ պահելով «իրապարակագրական բենասացության և միակողմանիության խութեն»: «Իր գործը,- գրում է Չոպանյանը, - ամբողջովին տոգորված է այն մոլեգին ատելությունովը, զոր այդ ազնիվ մարդը կտածեր անխիղճ ու գռեհիկ հարուստին, լիր փարիսեցիին, վայրագ եսականին դեմ, բոլոր տղրուկներուն և բոլոր

թարբյուֆներուն դեմ, և ան համակ խնկավետված է նաև այն թերմ գրությամբն ու աղապատանքովը, զոր այդ ոսկի սիրտը կզգար հալածված անմեղության, խորտակված տկարության համար և այն գորովագին զնայլմանքը, զոր ուներ պարզ, բարի, մաքուր, քաջ հոգիներուն համար. բայց այս ամենը երբեք քարոզի ծն չեն ստանար, ասոնք «կարտաշնչվին» իր գծած տեսարաններեն, իր նկատած տիպարներեն» (738):

Այս հանգամանքն էլ նկատի ունենալով՝ Չոպանյանը վստահաբար եզրակացնում է, որ «Սունդուկյանց ոչ միայն հայկական ինքնատիպ թատերագրության հիմնադիրն է, այլև մեր գրականության ամենն կատարյալ արվեստագետներեն մին» (738):

Սունդուկյանին նվիրված աշխատությունից անմիջապես հետո Չոպանյանը հոդված տպագրեց Յովի. Յովիաննիսյանի մասին՝ բանաստեղծի գալիք ստեղծագործական հոբելյանի առթիվ: Երկու գրողների վերաբերյալ գրականագետի աշխատությունները լույս տեսան գրեթե միաժամանակ, և դժվար չէ նկատել, որ գրականագիտական որոշ հարցադրումներ, որ առկա էին «Գ. Սունդուկյանց» ուսումնասիրության մեջ, մասնավորապես գեղարվեստի համակարգում հայեցողական քարոզի և գեղեցկագիտական տարրերի վերաբերյալ, անցնում են Յովի. Յովիաննիսյանին նվիրված հոդվածի էջերը՝ ստանալով կոնկրետ-վերլուծական իրացումներ:

Այսպես, Յովիաննիսյանին համեմատելով գրական նախորդների՝ Նալբանդյանի, Շահազիզի և Գամառ-Քաթիպայի հետ՝ Չոպանյանը նրան որակում է որպես «զուտ արուեստագետ», որը, ինչպես քննադասն է նկատում, «առաջին Ուսուահայ բանաստեղծն է որ քնարը նկատեց ամեն բանէ առաջ իբր արուեստի գործիք մը, իբր գեղեցիկ, հնայիշ նուագներ արտադրելու միջոց մը»<sup>18</sup>: Ի տարրերություն նրանց, որոնց արվեստում հրապարակախոսական տարրը կարևոր տեղ էր գրավում: Յատկանշական է, սակայն, որ որքան էլ Չոպանյանը բարձր է գնահատում Յովիաննիսյանի «զուտ քնարերգական» բանաստեղծությունը, այնուամենայնիվ չի շրջանցում նաև վերոհիշյալ «Երեք մեծ հրապարակախոս» պոետների արժեքը, դեռ ավելին՝ վերջիններիս համեմատ Յովիաննիսյանին գտնում է ավելի համեստ: Բայց դա ամենակն էլ արժեքները շփոթելու հետևանք չէր. քննադատը բանաստեղծներից յուրաքանչյուրին հասկանում և գնահատում է՝ խորապես զմբոնելով նրանց արվեստի նշանակությունը:

Անշուշտ, արվեստի մեջ Չոպանյանի նախասիրությունը ակնհայտորեն գեղեցկագիտական տարրի կողմն էր, սակայն քննադատը լավ էր հասկանում նաև հրապարակախոսական հանրօգուտ գաղափարայնության ու միտումնավորության օրինականությունն ու անհրաժեշտությունը, և այս իմաստով միանգամայն հասկանալի է նրա կողմից Նալբանդյանի, Շահազիզի, Գամառ-Քաթիպայի, ինչպես նաև Աբովյանի հրապարակախոսական-հայրենասիրական էջերի բարձր գնահատումը, հարկավ կոնկրետ-պատմական ժամանակաշրջանի մեջ վերջիններիս ունեցած նշանակության գիտակցումով: Իսկ Յովի. Յովիաննիսյանին տված «զուտ արուեստագետ», «զուտ բանաստեղծ» բնութագրումներով Չոպանյանը ըստ էու-

<sup>18</sup> Ա. Չոպանեան, Յովիաննէս Յովիաննիսյան, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1912, № 4761:

թյան պարզում է արվեստի մեջ հրապարակախոսության և գեղարվեստի հարաբերակցության ու վերջնական նպատակի ծևավորման վերաբերյալ իր տեսական մոտեցումը. «Զուտ արուեստագէտ» մը կամ «զուտ բանաստեղ» մը ըլլալ չի նշանակեր ո և է աշխարհայեացք չունենալ, միմիայն շնորհալի պատկերներ և ներդաշնակ բառեր քով քովի շարելով շատանալ. կան այդպէս ընողներ,- գրում է գրականագետը,- բայց անոնց գործը շինօն ծաղիկ մըն է, և չի կրնար համարուիլ ծշնարիտ արուեստ, որուն առաջին պայմանն է կենդանութիւն, ինչ որ կը ստացուի միմիայն անձնական ինքնատիպ հոգիի մը անկեղծ ինքնեկ արտագեղմամբը: Արուեստագետը ունի ուրեմն իր ուրոյն խառնուածքը, աշխարհահայեացքը, ձգտումները. բայց ատոնք կ'երգէ կամ կը նկարէ փոխանակ քարոզելու. ...իր գործը՝ գեղեցկագիտական հրապոյիր մը վայելքին հետ զոր ամէն բանէ առաջ կը պարգետ ընթերցողին՝ կը պարունակէ բարուն բարոյական մը, ուղղութիւն մը, գաղափար մը կամ գաղափարախումբ մը, զոր ընթերցողը պիտի գտնէ և ըմբռնէ»<sup>19</sup>: Այսպիսով, ստացվում է աշխատանքի մի տեսակ բաժանում, ուր արվեստագետի գլխավոր խնդիրը պետք է լինի ապահովել գործի գեղարվեստական կողմը, իսկ վերջինիս գաղափարական կողմի ընկալումը արդեն վերապահվում է ընթերցողին:

Ինչ վերաբերում է Յովի. Յովիաննիսյանի ստեղծագործության առանձնահատկությունների ընդգծնանը, ուշագրավ է, որ Չոպանյանը բանաստեղի գեղեցկագետ խառնվածքի ծևավորման մեջ որքան էլ առաջնային տեղ է վերապահում գերմանական ու մանավանդ ռուս բանաստեղծությունից կրած ազդեցությանը, այնուամենայնիվ կարևոր տեղ է հատկացնում նաև հայ ժողովրդական բանաստեղծության բարերար ներգործությանը, հանգամանք, որ գրականագետին կրկին առիթ է տալիս հավաստելու ժողովրդական երգերի գեղեցկությունը և արժևորելու դրանք իբրև «ամենամաքուր քնարերգութեան յաւիտենական անցանաքելի և ամենավճիտ աղբիւր»:

Ուելիստական մեթոդի եզրերի մեջ առնված մեկնաբանություններով են հատկանշվում Չոպանյանի՝ նաև Ալ. Շիրվանզադեի ստեղծագործության առանձնահատկություններին տված գնահատականները: Եթե Սունդուկյանն առաջինն էր, որ, հարելով «իրապաշտ» դպրոցին և վերջինիս շատ սկզբունքները վավերացնելով իր ստեղծագործության մեջ, հիմնեց հայ ռեալիստական բատերական գրականությունը, ապա Շիրվանզադեն, ինչպես նկատում է Չոպանյանը, առաջինն էր, որ «հայ վեպին մեջ մտցուց իրապաշտ ձգտումը»:

Գրականագետը Շիրվանզադեի ստեղծագործության էական հատկանշը համարում է «առարկայականութիւնը»: Յետաքրքիր է սակայն, որ այդ առանձնահատկությամբ Չոպանյանը Շիրվանզադեին սկզբունքորեն սահմանագատում է ոչ միայն հայ ռուսանտիկներից, այլև Վ. Փափազյանի և Զոհրապի իրապաշտական էջերից: Տարբերակման գլխավոր մեկնակետը գրականագետի համար գրողներից յուրաքանչյուրի՝ ստեղծագործության մեջ սեփական խառնվածքի, անհատականության ավելի կամ պակաս դրսևորվածությունն է: Այդ ինաստով Շիրվանզադեի ստեղծագործությունը

<sup>19</sup> Նույն տեղում:

դիտելով որպես «ամենաանանձնականը»՝ Չոպանյանը նրան համարում է «մեր ամենէն իսկական «իրապաշտը»: Անշուշտ, հարցն այնպես չպետք է պատկերացնել, թե Չոպանյանը թերագնահատում կամ բացառում է Փափազյանի և Զոհրապի ստեղծագործության գեղարվեստական արժեքը: Դարցի դրվածքը այլ է: «Յեռու եմ անշուշտ գրականութեան մէջ անձնական խառնուածքին տիրապետումը պակասութիւն նը նկատելէ,- շտապում է իր միտքը մեկնել գրականագետը,- ատիկա՝ տաղանդի ուրիշ տեսակ մըն է պարզապես. և արուեստի մէջ կենդանի, ու գեղեցիկ գործեր արտադրելու համար, էականը՝ տաղանդին տեսակը չէ, այլ նոյն ինքն տաղանդը: Կան իսկ ճիւղեր ու նիւթեր, որոնց համար անձնական խառնուածքը աւելի նպաստաւոր է: Ինչ որ կ'ուզեմ մատնանիշ ընել, այն է որ Շիրվանզադէ ունի տաղանդի «առարկայական» անունով ճանչուած տեսակը»<sup>20</sup>:

Դարցադրումը սկզբունքային է դառնում գրողի գեղագիտական համակարգը մեկնաբանելու համար: Արժնորելով Շիրվանզադէի արվեստը՝ Չոպանյանը «առարկայականության» հատկանիշով է բնութագրում գրողի ստեղծագործության մի շարք կողմեր, մասնավորապես նրա մեթոդի օբյեկտիվությամբ է հիմնավորում Վերջինիս արվեստի ուժն ու յուրահատկությունը: «Անձնական տրամադրութիւններ, որոշ աշխարհայեացք մը, տիրական նախասիրութիւններ չեն բռնապետեր Շիրվանզադէի գործին մէջ և կեանքի պատկերացումը չեն գունաւորեր հեղինակին եսին գոյնովը.-գրում է ուսումնասիրողը,- այդ գործին մէջ, կեանքը՝ ինչպէս որ է, բիւրազան ու հակասական, կը ցոլանայ հարազատօրէն: Յեղինակին ամձը կը թաքչի ինն իր ստեղծած բազմաթիւ մարդկային տիպարներուն մէջ, իրարմէ անհունապէս տարբեր և որոնց իւրաքանչիւրը իր ուրոյն կեանքովը կ'ապրի, իր անձնական խառնուածքն ու աշխարհայեացքն ունի»<sup>21</sup>:

Այսպիսով, Չոպանյանը Շիրվանզադէի ռեալիստական արվեստի ուժն ու ամենացայտուն հատկանիշը տեսնում է կյանքի օբյեկտիվ ընդգրկման, կերպարների ճշմարտացիության և առարկայականության մէջ: Սակայն ննան մեկնակետը չի ենթադրում, թե գրականագետը ամենևին բացառում է հեղինակի անհատականության դերը: Բացարձակ «անանձնականութիւնը», «մեքենական օրինականութիւնը արտաքին կեանքին, հեղինակին մօտ՝ անձնական ուրոյն հոգեբանութեան մը և աշխարհայեացքի մը բացակայութիւնը» կը յանգին,- ինչպէս բացատրում է Չոպանյանը, - լուսանկարչական արտայայտութեան մը, որ արուեստ չի կրնար համարուիլ»<sup>22</sup>:

Յուրաքանչյուր գրող ունի իր՝ ստեղծագործողի անհատական հոգեբանությունը, հոգեկան ձգումները, իր համակրանքներն ու հակակրանքները: Խնդիրն այն է, թե դրանք ինչպէս են դրսւորվում և ինչ ձևով են հանդես գալիս այս կամ այն գրողի գեղարվեստական համակարգում: Շիրվանզադէի ստեղծագործության ամենաարժեքավոր հատկանիշը Չոպանյանը համարում է հատկապես այն, որ գեղագետը մշտական պայքար է մղում միտումնավոր քարոզչի դեմ տեղիք չտալով կամխակալ բարոյախության: «Ուշադիր ընթերցողը կը նկատէ...- ասում է հոդվածագիրը, - որ

<sup>20</sup> Ա. Չոպանեան, Շիրվանզադէ, «Անահիտ», 1909, № 7- 8, էջ 146:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում:

այնտեղ կան քանի մը ընդհանուր գծեր, հեղինակին հոգեկան ձգտումները մատնող, զգուանք կեղծիքն, խարդախութենէն, իմաստակութենէն, կոպիտ շահամոլութենէն, պայմանադրամոլութենէն, կեղեքումէն, խոր գրութիւն դէա ի ընկճուածներն ու դժբաղդները, դէա ի բնութեան և ընկերութեան անարդարութեանց զոհերը. սէր՝ ամէն բանի, որ բնականօրեն գեղեցիկ է ու մաքուր: Բայց ասոնք կ'արտաշնչուին գործն իբր անոր գերագոյն բուրնումը. հեղինակը ասոնք իբր սկզբունքներ, վարդապետութիւններ քարոզելու ծգտում չէ ունեցած երբէք. ու մանաւանդ երբէք այդ զգացումներն ընթերցողին ներշնչելու կանխորշ միտումի մը համեմատ չէ որ նկարած է տիպարները. անկողմնակալ է ամենուն համար»<sup>23</sup>:

Այս ելակետից էլ Չոպանյանը շատ բարձր է գնահատում Շիրվանզադեի ռեալիզմ՝ այն սկզբունքորեն սահմանազատելով «քնապաշտ» դպրոցի ծայրահեղությունից: Քննադատը հանգամանորեն անդրադառնում է նաև Շիրվանզադեի ոճական առանձնահատկություններին՝ վերջիններին շարքում շեշտելով հատկապես բնականությունը, նկարագրությունների պատկերավորությունը և կենդանությունը:

Հատկանշական է, որ տասնամյակներ անց, երբ Չոպանյանը մեկ անգամ ևս անդրադառնում է Շիրվանզադեին, այս անգամ վերջինիս մահվան կապակցությամբ, դարձյալ շեշտում է գրողի ոճի առանձնահատկությունները՝ պարզությունը, բնականությունը, հարուստ լեզուն՝ ընդգծելու համար նաև, որ սխալ են նրանք, ովքեր գրողին մեղադրում են ոճ չունենալու մեջ: Ստեղծագործական այդ հատկանիշների մեջ քննադատը տեսնում է նաև ռուս գրողների՝ մանավանդ Դոստուկու և Տոլստոյի ազդեցությունը, և վերջում, նկատի ունենալով Շիրվանզադեի ռեալիզմի կատարելությունը, նրան անվանում է «հայկական հասեն»<sup>24</sup>:

Ա. Չոպանյանը անդրադաբել է նաև Յովի. Թումանյանին: Յետաքրքիր է իմանալ, որ 1923 թվականի մարտի 19-ին Փարիզի հայ համալսարանական միության կողմից Ֆրանսիայի մայրաքաղաքի սրահներից մեկում մեծ բանաստեղծի պատվին կազմակերպված գրական-գեղարվեստական երեկություն նա հանդես է եկել բանախոսությամբ, վերլուծել Թումանյանի գրական գործը՝ իր խոսքը համեմելով գրողի քերթվածների և պոեմների ընթերցումներով<sup>25</sup>: Այդ գեկուցման մեջ Չոպանյանը Թումանյանին ներկայացրել է նաև որպես հասարակական գործիչ, որ «մեծ յարգ ու պատիւ կը վայելէր Ազգային բոլոր շրջանակներուն մէջ»: Այստեղ էլ, ինչպես տեղեկանում ենք, Չոպանյանը հայտնել է Թումանյանի ծանր հիվանդության մասին՝ մաղթելով, որ շուտով ապաքինվի սիրելի բանաստեղծը, որ «տակաւին կը գտնուի իր հանճարին լրութեան մէջ»: Սակայն օրեր անց նա Թումանյանի որդուց՝ Քամլիկից, ստանում է չարագույթ հեռագիրը. «Քսաներեքի երեկոյեան հայրիկս վախճանւեց Մոսկուայում»<sup>26</sup>: Այդ առիթով ահա Չոպանյանը որոշում է լրագրական մի փոքրածավալ հոդվածով<sup>27</sup>

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 146:

<sup>24</sup> Տես Ա. Չոպանյան, Քրոնիկ, «Անահիտ», 1935, № 6, էջ 44–45:

<sup>25</sup> Տես «Ապագա», Փարիզ, 1923, 24 մարտ, № 17, էջ 3:

<sup>26</sup> «Ապագա», Փարիզ, 1923, 31 մարտ, № 13, էջ 1:

<sup>27</sup> Տես Ա. Չոպանյան, Յովիաննես Թումանեան, «Ապագա», Փարիզ, 1923, № 19, էջ 1-2:

անդրադասնալ մեծ բանաստեղծին, ուր, իր հարգանքի և երախտագիտության խոր զգացումը արտահայտելուց բացի, անհրաժեշտ է գտնում շատ հակիրճ մատնանշել նաև գրողի ստեղծագործության էական գծերը, այն արժեքները, որոնցով թումանյանը հարստացրեց հայ քնարերգությունը<sup>28</sup>:

Առաջին հերթին Չոպանյանը շեշտում է Թումանյանի ստեղծագործության ժողովրդական արմատները, ընդգծում այն իրողությունը, որ գրողի քնարերգությունը գլխավորապես բարձրացել է ժողովրդական նյութի վրա՝ ներառելով մեր ժողովրդի հինավուրց մտածողությունը, մեր ազգային խառնվածքի կարևոր երանգները։ Այս իմաստով գրականագետը Թումանյանին հանարում է Աբրույանի լավագույն հաջորդն ու նրա գրական ավանդների շարունակողը։

Թումանյանի գրական նորարարությունը, ինչպես ճշմարտացիորեն գտնում է Չոպանյանը, ավելի որոշ է հատկապես մեր բանաստեղծության մեջ լիրո-էպիկական ժանրի հաստատումով։ «Մեր հին ու նոր հմուտ բանաստեղծության մեջ քնարական տարրը չափազանց տիրապետող է. սակավաթիվ են հոն էցեր, ուր գործողություն գոյություն ունենա... Թումանյան նտցուց գործողությունը մեր բանաստեղծության մեջ, զարգացուց վիպերգին կարևոր կյանքու ճյուղը, և անոր մեջ տվակ գլուխգործոցներ...» (730)։ Այս նույն միտքն են հավաստում եղ. Զրբաշյանի «Թումանյանի պոեմները» գրքի հետևյալ տողերը. «Բայց կա նի բնագավառ, ուր Թումանյանի դերը հատկապես մեծ է, բացարձակ իմաստով առաջնակարգ և անփոխարինելի։ Դա էպիկական պոեզիայի, պատմողական բանաստեղծական ժանրերի (պոեմի, բալլադի) բնագավառն է։ Թումանյանի անունը մեր գիտակցության մեջ ամենից առաջ կապվում է էպիկական լայն ու հզոր պոեզիայի հասկացողության հետ։ Այստեղ ոչ մի ուրիշ բանաստեղծ չի կարող մրցել Թումանյանի հետ»<sup>29</sup>։

Չոպանյանը շատ բարձր է գնահատում նաև Թումանյանի լավատեսական ոգին՝ գտնելով, որ մեր ժամանակակից մելամաղձոտ բանաստեղծության մեջ նա բերեց «հոգեկան լուսավոր ու արու առողջության» տրամադրություն։ «Անոր երգը ուժի, զվարթության, հավատքի, լավատեսության պոռթքում մըն է, պայծառ ու խրոխտ նույնիսկ ցավի արտահայտության մեջ» (730).- Եզրակացնում է գրականագետը՝ բանաստեղծի քնարերգության մեջ հայտնաբերելով մեր ժողովրդի հոգևոր խառնվածքի համար այնքան խորհրդանշական դարձած կենսասիրության ցոլացումը, որը բոլոր ժամանակներում իր դրսնորումն է ստացել մեր բանաստեղծության մեծերի ներշնչանքի մեջ։ Այսպես՝ առանց հատուկ գուգահեռ անցկացնելով՝ Չոպանյանը հայտնաբերում է Թումանյանին նարեկացու, Քուչակի, Աբրույանի ստեղծագործության հետ կապող ընդհանուր հատկանիշը, որը հետագայում ուրիշների կողմից պետք է ստանար կոնկրետ բովանդակու-

<sup>28</sup> Մենք չկիտենք, թե Յ. Թումանյանի մասին Չոպանյանի կարդացած հիշյալ բանախոսությունը իր բովանդակությամբ, վերլուծնան իր տրամաբանությամբ որքանով է առնչվում այս հոդվածի հետ, սակայն դատելով բանախոսության վերաբերյալ «Ապագա»-ում արտահայտված մտքերից, նաև նրանից, որ բանախոսությունն ու հոդվածը իրար սահմանակցում են խիստ մոտ ժամանակով, կարելի է ենթադրել, որ այդ բանախոսությունը այս հոդվածի մի տեսակ նախորդող գուգակը կարող է լինել։

<sup>29</sup> Եղ. Զրբաշյան, Թումանյանի պոեմները, Եր., 1964, էջ 5-6։

թյուն և ընդգրկվեր բանաստեղծի գեղարվեստական և ազգային նշանակության ընդհանուր բնութագրի մեջ՝ դառնալով թումանյանագիտության զինանոցի մի կարևոր բաղադրիչը:

Ա. Չոպանյանը հոդված է գրել նաև Ավետիք Խսահակյանի մասին մեծ բանաստեղծի 60-ամյա հորելքանի կապակցությամբ: Այդ հոդվածում նա ցույց է տալիս Խսահակյանի գործի էական գծերը և հատկանիշները՝ արտահայտելով իր անկեղծ զմայլանքն ու սերը բանաստեղծի տաղանդի և «Վճիտ նկարագրի» հանդեպ: Չոպանյանը իրավացիորեն Խսահակյանին համարում է մեր նոր քերթության այն գլխավոր այուներից մեկը, որը «մեծ վիպերգող Թումանեանին կողքին՝ եկաւ դառնալ մեծ քնարերգակը արեւելեան Շայութեան ու մեծագոյն քնարերգակներէն մին ամբողջ հայ ազգին»<sup>30</sup>:

Իր խոսքի սկզբում Չոպանյանը հաստատում է, որ հայ բանաստեղծությունը իման ժամանակներից մինչև ներկա օրերը եղել է մեր ազգի մեծ փառքերից, նրա հոգեկան գորության շքեղագույն պոռթկումներից մեկը: Այն միշտ մեր ժողովրդին արժանապատվորեն կանգնեցրել է աշխարհի մեծ ազգերի կողքին: Ա. Խսահակյանի քնարերգությունը գնահատվում է որպես հայ հանճարի այդ մեծագույն արտահայտություններից մեկը, և բանաստեղծը արժանանում է քննադատի՝ «ազգային բանաստեղծ» բարձր պատվանումին:

Չոպանյանին հատկապես ոգևորում է Խսահակյանի բանաստեղծությունների հայկական ցեղադրոշն գույնն ու շունչը, այն, որ թեև գրողի միտքն ու սիրտը մարզվել և հղկվել են եվրոպական բարձր մշակույթմերի քուրայում, այնուամենայնիվ նա միշտ էլ իր ներշնչանքը առել է հայրենի բնության գեղեցկություններից, ազգային հարազատ միջավայրից, ժողովրդական երգերից՝ մնալով խորապես Շայ (հայը մեծատառով): Քննադատը խոստովանում է, որ ժամանակին՝ տարիներ առաջ, ինքը ևս խրախուսել է ջահել բանաստեղծին սեփական տաղերը ժողովրդական երգերի ներշնչամբ հյուսելու, ցեղադրոշն համեղ ոճի ու լեզվի միջոցով անձնական զգացումները թարգմանելու ձգտումը: «...Այդ հայ գոյնով երգերը կը յօրիներ (Խսահակյանը – Վ. Ա.) ո՞չ բռնազբօսիկ կերպով, ո՞չ իբր շինծու ննանողութիւն, այլ բնականորէն, ինքնեկօրէն, և ցեղային հարազատութեան միացնելով անձնական նօթի մը ինքնատպութիւնը»<sup>31</sup>, - գրում է Չոպանյանը՝ Խսահակյանի քնարերգության կենդանի ոգուն հակադրելով շատերի «արուեստակեալ» արտադրությունները:

Չոպանյանը ընդգծում է նաև Խսահակյանի ստեղծագործական մտքի վստահ սլաքը դեպի համանարդկային մեծ իդեալների ոլորտը՝ այդ հարթության վրա առանձնահատուկ տեղ հատկացնելով «Արու-Լալա Մահարի» պոեմին:

Չոպանյանը հաճախ է անդրադարձել նաև Ռաֆֆուն: «Անահիտում» տպագրել է «Խսահիւշները», բազմաթիվ առիթներով ներկայացրել է նրա արվեստի այս կամ այն կողմը: Սակայն մեծ վիպասանին նվիրված հատուկ աշխատություն գրելու առիթը Չոպանյանը ունեցավ միայն 1937 թվականին՝ Ռաֆֆու ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, նույն «Անա-

<sup>30</sup> Ա. Չոպանյան, Դնբեր-Աւետիք Խսահակեան, «Անահիտ», 1936, № 4, էջ 53:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 54:

հիտի» էջերում հրապարակելով մի հոդված, ուր ավելի ամբողջական ու հանգամանորեն է ներկայացնում գրողի դիմանկարը\*:

Հոդվածի սկզբունք քննադատը տարբերակում է գրողների երկու խումբ. մեկը՝ «տիեզերական կյանքը», համանարդկային հարցերը վարպետորեն արտահայտող, իսկ մյուսը՝ միայն իր ազգին հուզող կենսական խնդիրները ներկայացնող: Չոպանյանը Ռաֆֆուն անվերապահորեն գետեղում է երկրորդի մեջ նկատելով, որ «հայը ունեցած է այդպիսի գրագետներու և բանաստեղծներու բույլ մը, որ կազի հին ժամանակներու Եղիշեեն, Խորենացին ու Ֆրիկեն և կուօք կիանգի Ռաֆֆին կամխող Չամչյան վեհաշունչ պատմագրին, Արսեն Բագրատունի և Ղևոնդ Ալիշան դյուցազներգականերուն, Աբովյանին, Ծերենցին» (681): Յայրենաշունչ գրողների շարքը լրացնելով նաև արդի գրական դեմքերի՝ Թումանյանի, Խսահակյանի, Սիհանաթոյի, Վարուժանի և ուրիշների անուններով՝ գրականագետը «այդ շքեղ բույլին մեջ» մի առանձնահատուկ տեղ է հատկացնում Ռաֆֆուն՝ գրական այն սերի մեջ, «որուն ընդայնողն ու զարգացնողը եղավ» նա:

Մեզանում գրողի անմիջական նախորդներ ծանաչելով Աբովյանին, Մեսրոպ Թաղիառյանին, Չամչյան, Արսեն Բագրատունի և Ալիշան Մխիթարյաններին և հատկապես Ծերենցին Չոպանյանը Ռաֆֆու ամենամեծ արժանիքը տեսնում է Ժանրին նոր բովանդակություն, առավել ներգործության ուժ, հուզականություն և հատկապես արդիական հնչեղություն հաղորդելու մեջ: Ռաֆֆու գրական ճաշակի ձևավորման գործում Չոպանյանը կարևոր տեղ է վերապահում նաև եվրոպացի վարպետներից՝ Յայուղից, Դյումայից և Վալտեր Սքոտից կրած ազդեցություններին՝ չանտեսելով նաև գրողի «գերզգայուն քնարերգական հրավառ խառնվածքի» նշանակությունը:

Ուշադրության արժանի է հատկապես քննադատի տեսակետը Ռաֆֆու ռոնանտիզմի առանձնահատկությունների վերաբերյալ: «Ռաֆֆի ռոնանտիզմը մըն է էապես, բայց և ունի դիտելու կարողություն» (683), - գրում է նա: Գրողի ստեղծագործական համակարգում հանգուցային նշանակություն ունեցող այդ իրողությամբ է Չոպանյանը բացատրում նրա ստեղծագործության մեջ կենցաղի, բարերի, իսկ հաճախ էլ առանձին դեպքերի ու դեմքերի ռեալ, իրական նկարագրությունը, հանգամանք, որ հիմք է տալիս գրականագետին նաև ենթադրելու, թե Ռաֆֆու մի շաբթ գործեր «արոեն առաջին փորձերն են հայ իրապաշտ վեպին, որ հետո, Շիրվանզադեի, Մուրացանի, Նար-Դոսի, Արփիարյանի, Զոհրապի և այլոց գրչին տակ իր լիալիր զարգացումը պիտի ստանար»: Այս և հատկապես Ռաֆֆու ստեղծագործական երևակայության ուժը նկատի ունենալով՝ Չոպանյանը իրավացիորեն նրա գրական մեթոդը կապում է Յայուղի ռոնանտիզմի հետ՝ եզրակացնելով. «Ռաֆֆի ռոնանտիզմը մըն է Յայուղի տեսակեն, որուն խանդակավառ հոգին ու մեծաթոշի միտքը ոչ միայն կարող են մերթ իրականությունը դիտել և գոյություն ունեցող մարդկային տիպարները ճշգրտությամբ ներկայացնել, այլև կարող են, ինչ որ բարձրագույն արվեստի մը, մեծագույն տաղանդի մը ապացույցն է, երևակայությամբ հղացված դեմքեր կենդանի տիպարներու վերածել» (706–707):

\* Հոդվածում Չոպանյանը հատկապես մեծ տեղ է տալիս Ռաֆֆու քաղաքական ծրագրերի վերաբերյալ իր հայացքների շարադրմանը. մենք, ելեւով մեր քննության նպատակներից, անհրաժեշտ չենք գտել հանգամանորեն անդրադառնալ:

Կ. Դալլաքյանը այս դատողությունների մեջ նկատում է երկու գրողների ստեղծագործական առանձնահատկությունների զուգադրման այլ եզր. «Չոպանյանը Ռաֆֆուն համեմատելով համաշխարհային գրականության մեջ ռոմանտիկների հետ, նրան համարում է «Դյուգոյի տեսակեն» այն բանի համար, որ նրա հերոսները «ժողովրդի ծոցեն ելած ու մարդկային ընկերության անարդարություններեն զզված ընթոստ ու պայքարասեր» մարդիկ են, որոնք պայքարում են «չքավոր ժողովուրդը կեղեքող ու շահագործող գեց հովիվներուն դեմ»»<sup>32</sup>:

Խոսելով Ռաֆֆու ստեղծագործական ժառանգության գրական-պատմական արժեքի մասին՝ Չոպանյանը շատ բարձր է զնահատում գրողի գործի հատկապես ազատատենչ ու մարտասեր ոգին, ներշնչնան ու ոգևորման հզոր ուժը և վերջինիս՝ սերունդների վրա թողած մեծ ազդեցությունը. «Ոչ մեկ հայ հեղինակ - ասիկա պետք է ըսել ու կրկնել, - գրում է ուսումնասիրողը, - Եղիշեն ու խորենացին ի վեր, այնպիսի խոր ազդեցություն ունեցած է իր դարաշրջանի հայ երիտասարդության վրա, ինչպիսին ունեցած է Ռաֆֆին: Եվ ատիկա անոր համար, որ ան իր հայրենասիրական և ազատասիրական գաղափարները կտարածեր ոչ թե հասարակ քարոզներով, այլ տաղանդավոր վիպասանի կենդանի տիպարներով ու պատկերներով» (707):

Յետևողական բնութագրումների այս շղթայի մեջ էլ ուրվագծվում են գրականագետի տեսական պատկերացումները գրականության հասարակական դերի և կոչման վերաբերյալ (տե՛ս 694–695):

Եվ վերջապես, Չոպանյանը Ռաֆֆու արվեստի ամենակարևոր հատկանիշներից մեկը համարում է այն «ինքնաստեղծ» տիպարները, որոնք, ի տարբերություն գրական նախորդների ստեղծած պատմական հերոսների և իրական դեմքերի, կոչված էին իրենց մտացածին արարքներով ժողովրդին ոգևորելու և նրան մրելու ազատագրական պայքարի: «Այդ նորանշան սիստեմը, զոր հայ գրականության մեջ դեռ ոչ մեկը չեր կիրարկած, եվրոպական գրականության մեջ ալ տակավին հազվադեպ էր այն ատեն» (693), - եզրակացնում է գրականագետը:

Ռաֆֆու արվեստի այս անկրկնելի յուրահատկությունները նկատի ունենալով էլ ահա՝ Չոպանյանը նրան արժանացնում է «ազգային վիպասան» բարձրագույն տիտղոսին:

Այսպիսով, Ա. Չոպանյանը, ելնելով ազգային մշակույթի միասնության գաղափարից, միշտ իր տեսադաշտում պահեց մեր ազգի երկու հատվածների գրական-մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի երեւոյթները՝ հետևելով դրանց զարգացման ընթացքին: Յամապատասխան պատմական կացության՝ Չոպանյանը ծրագրեր մշակեց, առաջարկություններ արեց, ուղիներ նախանշեց, նրանց գրական արժեքների գնահատման չափամիջներ առաջարեց:

Նա ուշագրավ և գիտական լուրջ ուսումնասիրություններ գրեց ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ, իսկ հետագայում՝ սփյուռքահայ ու խորհրդահայ գրողների և նրանց ստեղծագործությունների մասին՝ ազգային միասնական գրականության զարգացման համար միշտ կենսական համարելով նրանց մշակութային մերձեցման, միմյանց միջև մտավոր սերտ հարաբերություններ հաստատելու, իրար լրացնելու ձգտումը:

<sup>32</sup> Կ. Դալլաքյան, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 436-437:

### **ВАЧАГАН АВАГЯН – *Новая восточноармянская литература в оценке***

*Аршака Чопаняна.* – Одна из важнейших сторон деятельности видного западноармянского критика и литературоведа А. Чопаняна заключалась в том, чтобы восточные и западные армяне познакомились с культурными достижениями друг друга. Это нагляднее всего проявилось в его бытность редактором журнала “Анайт”. Он регулярно освещал литературную политику восточноармянской периодики, последние новинки прозы и поэзии и поднимал насущные вопросы, свойственные как западно-, так и восточноармянским газетам и журналам. Сопоставляя две ветви отечественной словесности, Чопанян исходил из единства национального сознания. Он настойчиво говорил о том, что необходимо сблизить две эти ветви, видя в этом важную предпосылку дальнейшего развития армянской литературы. Не случайно на страницах “Анайт” публиковались произведения соотечественников, живших в Российской империи, статьи о творчестве Х. Абояна, П. Прошяна, Раффи, Г. Сундукияна, Ал. Ширванзаде, И. Иоаннисяна и др., обзоры, демонстрировавшие главные направления восточноармянской литературы. Заметно оживив интерес к ней западноармянской общественности и критики, Чопанян активно сближал культурную жизнь двух частей народа.

**VACHAGAN AVAGYAN – *New East-Armenian Literature in Arshak Chopanyan's Estimation.*** – One of the significant aspects of Arshak Chopanyan's activities, from the beginning as a specialist of literature, was his permanent concern of evaluating cultural values of two Armenian sectors, mutual expansion and the issue of acquaintance. The issue of convergence of the Armenian two sectors was particularly emphasized mainly in the period of “Anahit” by Chopanyan, when he, as the editor of the journal, frequently related to literary politics of the Eastern Armenian, the recent novelties of literature and put some phenomena of Western and Eastern Armenian literatures in his circle of criticizing.

Comparing literature of two sectors Chopanyan proposed necessity of spiritual convergence of two sectors basing on the notion of national unified consciousness, as an important precondition of developing of national literature. He periodically published compositions from Eastern Armenian Literature in the pages of “Anahit”, researches on Kh. Aboyan, P. Proshyan, Raffi, G. Sundukyan, Al. Shirvanzade, H. Hovhannisyan and others were publicized, as well as he published critical essays, which outlined the main developing directions of Eastern Armenian literature, and introduced the background of literary movement. So Chopanyan noticeably activated the western society and especially interests of literary criticizing toward eastern literature, and finally created bridges of spiritual convergence in the cultural life of two sectors.